№ 228 ԿԻՐԱԿԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 228

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—58.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

Ի նկատի առնելով, որ **Յունաստանը Սերբիայի, Բոլգարիայի եւ Չերնոգորիայի** հետ միացած պատերազմում են **ԹԻՒՐՔԻԱՅԻ** դէմ, կառավարութեան թոյլտուութեամբ ես նշանակել եմ մաղթանք միացեալ պետութիւնների զէնքի աջողութեան համար, այսօր, հոկտեմբերի 14 ին, ցերեկվայ ժամը 12-ին յունաց Նիկոլայէվսկի եկեղեցում (5-րդ քաղաքամաս, Սոֆիյսկի փողոց, Խարփուխ), որի մասին և յայտնում եմ ի գիտութիւն տեղական յոյն գաղութի, այլ և այն անձանց, որոնք կը կամենան ներկայ գտնվել յիշեալ մաղթանքին։

Թիֆլիսի Յունաց Բարեգործական Ընկ. փոխ-նախագահ Ի. Գ. ԲԱՍՏԻԱՆՕՎ
առ. 770. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ
Ցայտնի դասական ողբերգութիւն ՍՕՖՕԿԼԷՍԻ
ԷԴԻՊ ԱՐՔԱՅ
5 արարուածով
Պարիզի Comédie Française-ի միջանցէնով.
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տոմակների գնից զիջում ունենալու են միմիայն Հայոց Դրամատ. Ընկերութեան անդամները և աշակերտները։
ԱԶԴ.—Երկուշաբթի, հոկտ. 22-ին, առաջին անգամ «ԾԱՆՐ ԵՐԱԶ»—Լ. Քալանթարի.
Բեմադրութեան՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
առ. 765. 2—2

Թիֆլիսի Դրամատիկական Թատրոն
«ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» — ԴԻՐԵԿՑԻԱ Պ. Օ. ԶԱՐԷՁՆԻԻ
Այսօր, կիրակի, հոկտեմբերի 14-ին 1912 թ. ԵՐԿՈՒ ներկայացում
ԱՌԱՒՕՏԵԱՆ կը ներկայացվի 2-րդ անգամ
ԵՐԿՈՒՇԵԱՆ կը ներկայացվի 2-րդ անգամ
ՄԱՐԻԱ ՍՏԻՒԱՐՏ
ՆԱՏԱԼԻ ՊՈՒՇԿԻՆԱ
(Ա Ր Ե Գ Ա Կ Ի Ք Ր Մ Ո Ի Հ Ի Ն)
Ողբերգութիւն 5 արար., հեղ. Շիլլերի, թարգմ. Ս. Ս. Շիշկովի։
Պիէս 4 գործողութեամբ, հեղին. Վ. Բոցեանովսկիի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Սկիզբը ցեր. ժ. 12½-ին։
767. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
Նշանակված է կիրակի, հոկտեմբերի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին (Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. դահլիճում, Աբաս-Աբադան հրապ. № 7)։ Ժողովի օրակարգն է՝ Արդիւնում և Վաղարշապատում Ընկ. ճիւղեր բաց անելը, պաշտօնավար անձանց լրացուցիչ ընտրութիւնները և հերթական խնդիրներ։
(կ.) առ. 752. 2—2

„ՆԱԽՇԻՐԱ" ԸՆԿԵՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն ՎԱՌԵԼԱՑԻՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՏԷՐԵՐԻՆ և ՔԱՐԱՇՈՒԽ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ, Թիֆլիսում, որ Տկվիբուլի քարածուխի մենավաճառային պայմանագրի ժամանակը Ընկերութեան կնտրագէնտի հետ վերջացված լինելու պատճառով, վագոններով տրվող պատուէրները ցանկացողներից կանխապէս ընդունվում են Ընկերութեան վարչութեան մէջ, Սօլոլակայա № 14 տանը։
(յ. կ.) առ. 750. 3—3

Տասն տարուց ի վեր կազմում եմ
Հայկական Արձանագրութիւնների Ժողովածու
CORPUS INSCRIPTIORUM ARMENICARUM
Զարդարված արձանագրութիւնների բազմաթիւ լուսանկարներով։
Ուստի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրութիւնների լուսանկարներ, որոնց արժէքը ըստ պահանջման կը հատուցանեմ, կամ փոխարէնը լուսանկարներ կը տամ իմ կողմից ալբոմներից։
Երուանդ Լալայեան
Հասցէս. Тифлисъ, Лермонтовская № 1. (կ.) առ. 744. 4—3

0—1 769.

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի
Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պոզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։
Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19։
(չ.ու.կ.) առ. 675. 30—15

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ. (երեկոյեան 5—7 ժ.
Սօլոլակ, Ռուիչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը)։
(Ե. Հ. Կ.) առ. 746. 100—7

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ատամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մանագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։ (երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.
(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—43

ԲԺԻՇԿ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
փոխադրվեց «Փետրվարի 19-ի փողոցը» (Նախկին Պէսկովսկայա) № 30.
Վիրաբուժական հիւանդութիւններ
ՄԱՍՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ՝ բժշկումն նորագոյն ձևով սեռամիզային գործարանների (սուլ և քրօնիկական սուսամակի), միզափամփշտային քարերի՝ առանց վիրահատութեան (փշրելով), սեռական գործարանների անկարութեան (իմպոտենցիա) և այլն, սիֆիլիսի 606 և 914-ով։ Թոքախտի բժշկումն վիրաբուժական միջոցով (արհեստական օդալանջաթաղանթ—искусств. пневмоторакс) Forlanini, Brauer եւ այլոց ծեւով։
Ընդունելութեան ժամերը՝ առ. ժ. 12—1-ը, եր. 5—7-ը։
(ա.օ.) առ. 761. 100—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ա. Գ. ՓԱՆԵԱՆ
Տեղափոխվելով ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ՝ ընդունում է հիւանդներին ամենայն օր
առաւօտեան ժամը 10—2-ը
երեկոյեան ժամը 5—6-ը։
Հասցէ՝ Католическая ул. № 10.
(հ.կ.) առ. 759. 4—2

ԲՈՆԱԾ ԴԻՐՔԵՐԸ

V

Մինչ բալկանեան պետութիւնները չէ գիտէին, թէ ինչպիսի մեծ և ծանր զոհաբերութիւններ էին հնթարկում իրանց՝ սկսելով ներկայ պատերազմը։

Դիտէին։

Բայց հանգամանքները այնպէս դասաւորվեցին, որ նրանք այլևս անկարող եղան զսպել և յետ պահել իրանց, անկարող եղան սպասել աւելի յարմար պատեհութեան։

Ժողովրդական խաւերը շատ էին էլեքտրականացել, երիտասարդական ըղձացմունքները շատ էին բորբոքվել։ Եւ ամենքին թուում էր, որ աւելի սպասելը՝ կը լինէր փոքրոգութեան նշան, կը լինէր յարմար առիթի սխալ գնահատութիւն։

Եւրոպան, որ՝ պատերազմի նախօրեակին՝ սկսեց ամեն ջանք գործ դնել յետ կանգնեցնելու կուսակցերին պատերազմական արշաւանքներից, մինչ այդ անուշադիր եղաւ դէպի այն վերին աստիճանի զրգռված դրութիւնը, որի մէջ գտնվում էին սլաւօնական պետութիւնները և Յունաստանը։

Այնպէս էր թուում, որ կարծես Եւրոպան նոյնիսկ խրախուսում էր բալկանեան պետութիւններին ծայրայեղ քայլերի դիմելու։

Արդեօք այստեղ դեր է կատարել մի որևէ դիտաւորեալ միտք, մի որևէ դիպլոմատիական խաղ, մի որևէ քաղաքական ծրագիր—այդ անկարելի է պնդել։ բայց անկասկած է, որ Եւրոպան այնպիսի միջոցների չէ ձեռնարկել, որպէսզի բալկանեան պետութիւնները չը հասցնեն գործը պատերազմի։

Բալկանեան յուզումները նպաստաւոր էին երեքպետեան դաշնակցութեան դիտումների և հաշիւների համար։ Նպաստաւոր էին այդ շրջանում՝ մինչև մի յայտնի աստիճան, աւելի որոշ ասենք՝ մինչև Իտալիայի և Թիւրքիայի հաշտութիւն կնքելը։

Արդարև, Եւրոպան ընդհանրապէս և մանաւանդ երեքպետեան դաշնակցութեան երկու զինակիցները՝ Աւստրիան և Գերմանիան շատ ցանկանում էին, որ Թիւրք-իտալական պատերազմը դադարի և կուռող կողմերը հաշտվեն։ Բայց Թիւրքիան չէր ցոյց տալիս ոչ մի հակում դէպի հաշտութիւն և պատրաստ էր շարունակելու անվերջ՝ սկսած պատերազմը։ Ամեն մի հանգամանք, որ կը նպաստեր Թիւրք-իտալական պատերազմի դադարելուն, ուշադրութեան արժանի էր։

Եւ ահա հանդէս եկան բալկանեան յուզմունքները, բալկանեան պետութիւնների միացեալ բողոքները Թիւրքական անկարգութիւնների դէմ խոստացված բարենորոգութիւնների դանդաղ իրագործութեան դէմ։

Իրօք՝ նրանք, այդ յուզմունքները, ազաւորութիւն գործեցին։ Թիւրքիան տեսաւ իրան նոր մեծ վտանգի առաջ և սկսեց հակվել դէպի հաշտութիւն մեծ զիջումներով։

Բայց հազիւ նա բանակցութիւնները վերջացրել էր, որ բալկանեան դաշնակից պետութիւններից կրտսերագոյնը, Չերնոգորիան, յայտարարեց պատերազմ։ Թիւրք-իտալական հաշտութեան պայմանագիրը ստորագրվեց Չերնոգորիայի յարձակումից յետոյ։

Եւրոպան ուշ սթափվեց։ Նա բաց թողեց ժամանակը, երբ կարող էր ազդել բալկանեան պետութիւնների վրա։ Եւ երբ նա միջամտեց և իր առաջադրութիւններն արեց այդ պետութիւններին, արդէն անհնարին էր յետ կանգնեցնել իրերի լոգիկայի գործնական թելադրանքները։ Բալկանեան ժողովրդական մասսաները այլևս տրամադիր չէին սթափեցնող յորդորները լսելու։ Եւ միայն մի ելքի մասին էին մտածում լուծել պատմական կնճռոտ խնդիրը պատերազմով, սեփական աբիւնի, սեփական աշխատանքի, սեփական դրամական զոհողութիւնների միջոցով և գնով։

Վերջին տարիների դէպքերը չափազանց լարել էին բալկանցիների ղրները։ Բոլգարիան, Սերբիան, Չերնոգորիան և Յունաստանը մի քանի անգամ պատրաստվել էին արշաւանքների, բայց յետոյ կանգ էին առել, լսելով Եւրոպայի խորհուրդները։ Նրանք չափազանց շատ էին ամբարել իրանց մէջ հրանիւթ տարրեր և ամեն մի րոպէ պատրաստ էին բորբոքվելու։

Եւ բորբոքվեցին։

Եւրոպան նաև այս անգամ փորձեց նրանց յետ պահել ներգործական քայլերից։

Բայց արդէն ուշացել էր։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 հոկտեմբերի

Պետերբուրգ.—«Այսօր Նորին Կայսերական Բարձրութիւն Գահաժառանգ Արքայազնը լաւ անցրեց օրը, քնեց երեք ժամ շարունակ, կերաւ աւելի լաւ։ Տաքութիւնն է ցերեկով 38,3, երեկոյեան 37,9, զարկերակը ցերեկով 128, երեկոյեան 122. Ստորագրեցին պալատական բժիշկներ պրոֆեսոր Ֆէօդորով, Բոտկին և Օստրոգորսկի»։

Մինիստրների խորհրդի շինութեան մէջ, բոլոր մինիստրների ներկայութեամբ, գլուխ ունենալով ատատսեկրէտար Կոկովցէվին, կատարվեց մաղթանք Գահաժառանգի առողջութեան համար։ Խորհուրդը ամենահպատակ հեռագիր ուղարկեց Սպալա։

Սինոդում բոլոր անդամների և օբէր-պրոկուրորի ներկայութեամբ նոյնպէս կատարվեց մաղթանք։ Կատարվեցին նաև մաղթանքներ ֆինանսների և ներքին գործերի մինիստրութիւնների մէջ և ուրիշ շատ հաստատութիւններում։ Ռուսաստանի բազմաթիւ քաղաքներում նմանապէս կատարվում են մաղթանքներ։

Նոմանդարտի հրամանատար Զուգինի դագաղի վրա նոցին Մեծութիւնների կողմից դրվեց խաչ կենդանի ծաղիկներից։

—

Վէրակրուց.—Կառավարական զորքերը նորից տիրեցին քաղաքին և դերի վերցրին գեներալ Դիացին։

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(Տ. Կ.) 291. 50—46

Բերլինի համալսարանի
ԲԺԻՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, թոքախտի և սրտի։ Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ԲԱԳԻՒ պրէպարատներով և էլեքտրականութեամբ։
Ընդունելութիւնը ամեն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Սօլոլակ, Բէհրութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա)։ Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 699. 100—21

ԲԺԻՇԿ
Ա. Մ. Մկրտչեանց (որդի)
Նախկին ասիստենտ Մոսկվ. Կայս. Համալս. կանանց կլինիկայի.
Կանանց հիւանդութիւններ եւ մանկաբարձութիւն։
Բժշկութեան Ֆիզիկական մէթոդներ.
Ընդունելութիւնը՝ երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը ցեր. ժ. 12—2-ը, իսկ երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը երեկ. ժ. 5—6-ը։
Բէրուսովսկայա 58. Տէլէֆոն 2—30.
(օ. մ.) առ. 755. 10—3

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
11 հոկտեմբերի

Բելգրադ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ առաջին զօրաբանակի առաջաւոր գնդերը գրաւեցին Կումանօվոյի առաջ ընկած գլխաւոր դիրքերը։ Այսօր գրաւվեց Կումանօվոյի մի մասը։ Կռիւը դեռ շարունակվում է։ Թիւրքաց արտիլէրիան լիակատար պարտութիւն կրեց։

Սկուպշչինայի նկատերը հերթական օրինագծերը ընդունելուց յետոյ յետաձգվեցին անորոշ ժամանակով։ Պատգամաւորները միաբերան իրանց ռոճիկները նուիրեցին պատերազմի օգտին։ Մինիստր-նախագահը մեկնեց գլխաւոր բանակատեղին՝ Վրանիւ։

—

Բելգրադ.—24 ժամ տևող կռուից սերբերը յաղթութեամբ դուրս եկան։ Թիւրքերը թողին պատերազմի դաշտում սպանված մօտ 5000 մարդու։ Սերբերի կորուստները խոշոր են։ Կռիւը ղեկավարում էր գահաժառանգ Ալէքսանդրը ենթարկելով իրան վտանգի։ Սերբերը ի միջի այլոց ձեռք ձգեցին 12 թնդանօթ։ Թագաւորը շտաբի կառավարչի հետ այցելեց կռուի դաշտը։ Ցաղթութեանը տրվում է մեծ նշանակութիւն, որովհետև Թիւրքերին մնում է միայն Ուսկիւբի դիրքը։ Թիւրքերի ռումբերը չեն պայթում։ Բելգրադ են բերվում 800 վիրաւորներ։

—

Վրանիւ.—(Ճեպընթաց)։ Կէսօրին Կումանօվոն անձնատուր եղաւ։ Կռիւը կատաղի է։ Սերբ զօրքերը գտնվում են Սկիւտարի ճանապարհին։ Այսօր սերբերը վերցրին Սէնիցան։ Սէնիցայի և Նովօ-Բազարի անձնատուր լինելուց յետոյ սերբերը տէր են դառնում դրութեան Նովօ-Բազարի սանջակում։

—

Սոֆիա.—Բոլգարական զօրքերը գրաւեցին Կըրկ-Քիլիսէն։

Թիւրքաց զօրքերը յետ նահանջեցին անկարգ դէպի Բուրնահիսար, թողնելով թնդանօթներ, 16 արկղ ռազմամթերք և ուտելիք։

Մայրաքաղաքի եկեղեցիներում կատարվում են մաղթանքներ։ Տեղի են ունենում ցոյցեր։

Թագաւորը արքայազների հետ այցելեց Ստարայա Զագօրա բերված թիւրք գերիներին։

—

Ստարայա Զագօրա.—Երէկ բոլգարները անցան Արդան և մօտեցան Ադրիանուպօլին հարաւից, տիրելով բերդերին։ Բոլգարները գրոհ տալով մի տեղում գերեցին 1200 թիւրք զինուորի։

Բոլգարիայում վերակվեց գնացքների երթևեկութիւնը։ Աշխատանքները կատարվում են կանոնաւոր։ Զօրքից ստացվում են յոյժ նպաստաւոր տեղեկութիւններ։ Զօրքի մօրալ դրութիւնը գերազանց է։ Նրա լօզունգն է՝ «Առաջ դէպի Ցարգրադ»։ Զօրքը միայն բժիշկների կարիք ունի։

—

Աթէնք.—Թիւրքերը յետ նահանջելով կորցրին 22 դաշտային թնդանօթ և զանազան ռազմամթերք։ Թիւրքերի մարդկային կորուստները խոշոր են։ Ցոյները Սերվիայի մօտերը վերցրին շատ գերիներ։ Թիւրքերը Սէրվիայում սրի քաշեցին 70 յոյնի և մի քահանայի։ Կռիւը շարունակվում է Եփիրոսի զօրքի հետ։

Հնդկական յոյները նուիրեցին 731, իսկ Լօնդօնի յոյները 14,000 ֆունտ ստերլինգ կամաւոր զինուորների օգտին։ Բոլոր եկեղեցիներում կատարվեցին մաղթանքներ երէկվայ յաղթութեան առիթով։ Թագաւորը մեկնեց գլխաւոր բանակատեղին, իսկ թագուհին Լաբիսա՝ կարմիր Խաչի աշխատանքներին մասնակցելու համար։

Կրետէի մահմեդականները աղօթում են թիւրքաց զօրքի աջողութեան համար։

—

Կ. Պոլիս.—Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն կուռոյ յոյն զօրքերի թիւն է 100,000։ Ցոյները կարող են անարգել հասնել մինչև Սալոնիկ, ուր գտնվում է թիւրքաց հարաւային զօրաբանակը։

Թիւրքաց զօրքի մէջ սկսվել է տիֆ։

Նազիմ փաշան իր շտաբով մեկնեց մայրաքաղաքից։ Համալսարանը փակվեց, ուսանողները մտան զօրքերի շարքը իբրև կամաւորներ։ Էլեքտրաքարշը չէ գործում։ «Ժէօն Թիւրքը» մեղադրում է Ռուսաստանին բալկանեան պատերազմը յարուցանելու մէջ։

—

Բերլին.—«Կ. Ցայտ.»-ը հերքում է լրագրական այն տեղեկութիւնը, թէ գերմանական կառավարութիւնը թիւրքաց կառավարութեանը ուղարկեց Բերլինից 70 միլիոն ֆրանկ Աբդիւլ-Համիդի գրաւած փողերից։ դեռ 1911 թ. Թիւրքիային վճարվել է Աբդիւլ-Համիդի փողերից սոսկ 11 միլիոն մարկ։

ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԿՈՒՌՈՂՆԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 հոկտեմբերի

Պետերբուրգ.—Սինոդը թոյլատրեց համառուսական հանգանակութիւն բանալ յօգուտ Կարմիր Խաչի բալկանեան վիրաւոր և հիւանդ սլաւոնների օգնելու համար։ Նուէրների մի մասը կը ստանայ ռուսական Կարմիր Խաչը, իսկ մի մասն էլ ուղղակի բալկանեան պետութիւնների Կարմիր Խաչի ընկերութիւնը։

—

Վիէննա.—Պալատում կրամարժն ասաց. «Սլաւոնների հերոսական յաղթութիւններից յետոյ անկարելի է խլել յաղթողից իր նուաճած բաղդը։ Աւստրիայի հասարակական կարծիքը կանգնած է բէալ քաղաքական տեսակէտի վրա։ Հէնց այժմ Աւստրիայից է կախված եւրոպական խաղաղութիւնը։ Միապետութեան ամեն մի սխալ քայլը կը ստեղծէ համաշխարհային պատերազմ։ Զեխերը անկեղծ կողմնակից են արտաքին ու ներքին խաղաղութեան։ Նրանք վառ կերպով ցանկանում են, որպէսզի հանուր Աւստրիան վարէ հաշտարար քաղաքականութիւն»։

—

Պրագա.—Պատերազմի դաշտն են մեկնում շարունակ սանիտարական խմբեր։

—

Խրիստիանիա.—Պաշտօնապէս յայտարարվեց, որ Նորվէգիան խիստ չեզոքութիւն է պահելու բալկանեան պատերազմում։

ՎԱՍՓՈՒՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 4 հոկտեմբեր

Նոր վարչութիւնը որուն ի՛նչ գոյն ունենալն որոշել կարելի չէ, գործի սկսաւ Ա. տենապետ ընտրուեցաւ Ստեփան էֆ. Գաբայեան, որով վարչութիւնը պիտի կոչուի Գարայեան վարչութիւնը։

Նոր վարչութեան նախաքայլն իսկ շրջապատուած է ծանր դժուարութիւններով, և արդարն անիկա ունի ծանր և պատասխանատու դիրք մը։

Առաջին դժուարութիւնը, որ իրեն կը սպասէ և որ, իր առաջին նիստին օրակարգի խնդիրն եղաւ 29-է 45 տարեկաններու զինուորագրութեան ծանր հարցն է, որ այս միջոցիս ամենէն շատ կը զբաղեցնէ հայոց միտքը, վասն զի ոչ միայն կեանքերու և ընտանիքներու փչացումն, այլ տընտեսական անագին տագնապ մըն է, որ պիտի ստեղծուի այս որոշման գործադրութեամբ։

Հակառակ անոր, որ կառավարութիւնը շարունակ կը հաւատար, թէ 29 էն մինչև 40 տարեկաններու արձանագրութիւնները զէնքի տակ առնուելու համար չեն, հիմա կը տեսնուի, թէ Էդիրնէի մէջ, որ պատերազմին դաշտին անհամեմատ մօտ տեղ մըն է, կառավարութիւնը արդէն գործադրած է 29-էն 45 տարեկան ոչ-իսլամներու զէնքի տակ կոչելու որոշումը, որ տակաւին օրինագիծի ձևին տակ կը մնար խորհրդարանին մէջ և որ ոչ քննուած և ոչ ալ վաւերացած էր։

Այս կարգադրութեան նպատակը դրամական է, սակայն անիկա ալ ծանր կշռելու հանգամանք ունի, ուստի բոլոր հոգևոր պետերն համխմբաբար բողոքներով Բ. Դուռ բողոքեցին։

Ցունաց պատրիարքը՝ տէր-Ցովակիմ՝ շատ ազդուրէն կը հետապնդէ այս խնդիրն և նոյն իսկ Եւրոպայի բողոքելու խօսքեր կընէ։

Այս կիրակի օր, կըսուի թէ, քրիստոնեայ հոգևոր պետերը իրարու հետ պիտի բանակցին։ Հրէից բարձրագոյն ալ այս խնդրոյն մէջ համամիտ ըլլալն յայտնած է և գործակցութիւնը խոստացած է։

Զէնք գիտեր թէ այս դիմումներն ինչ ելք պիտի ստանան, սակայն «Թանին» ծաղրած է Ցովակիմ պատրիարքը, ըսելով թէ «արդեօք պատրիարքարանն ալ մեզի դէմ պատերազմ պիտի բանայ»։

Այսքան տարբերական իրաւունքի խնդիր մը ըմբռնել չուզող կառավարութեան մը երևակայեցէք թէ Եւրոպա կուզէ դեռ վրստահութիւն ցոյց տալ և կը հաւատայ, թէ անիկա կրնայ կատարել բարենորոգումներ։

Վարչութիւնը, այս շատ կենսական խնդրէն զատ, ունի հայոց ապահովութեան հարցը, որ աւելի քան երբէք վտանգուած ըլլալ կը կարծուի պատերազմին ոգէտ խուժանին մէջ առաջ բերած գրգռութեամբ։

Զէնք գիտեր թէ ինչ տխուր հետևանքներ պիտի ունենայ այս պատերազմը, որուն մոլեռանդներ կուզեն կրօնական դոյն տալ։ Հայերն, իբր քրիստոնեայ, անշուշտ լաւ չեն դիտուիր, և շատեր յայտնապէս հակառակ ոգի մը ցոյց կուտան։

Հայկական հարստահարութեանց համար ազգին յարուցած աղմուկը, որ խեղդուեցաւ թնդանօթի որոտումներուն մէջ, արդէն կասկած ներշնչած էր թիւրքական շրջանակներու մէջ, և շատեր պետութեան տագնապալից վիճակէն օգուտ քաղելու փորձ մը կը նկատէին յարուցուած աղմուկը։ Հիմա աւելի կասկածով կը նային հայոց, վայրկեանէ-վայրկեան սպասելով որ հայերն ալ իրենց դէմ նոր դժուարութիւն մը ստեղծելու ձեռնարկեն։

Այս դէպ վերաբերումը աղղարարութիւն մը եղաւ, և ազգը առ այժմ իր արդար իրաւունքը հետապնդելէ առանց ետ կենալու ընկրկեցաւ և դէպի ետ շարժումներ կընէ։

Պատրիարքին հրաժարականը ետ առնել տրուեցաւ և հարստահարութեանց վերջ տալու միջոցներուն մասին կառավարութեան, այս տագնապի պահուն, ծրագիրներ ներկայացնելու որոշումն յետաձգուեցաւ աւելի լաւագոյն օրերու։

Պէտք է դիտել, որ իրերու այս անընդհատ ընթացքին մէջ՝ Թիֆլիսի մտաւորականութեան ձեռնարկը մեծ ուրախութիւն... ինչպէս նաև մեծ յոյսեր տուաւ Թիւրքահայոց, որոնք բերնէ բերան տեղեկացան այս ժողովին որոշումներուն և պատգամաւորներուն Էջմիածնայ մէջ կաթողիկոսին ներկայանալուն մանրամասնութիւնները, վասն զի Կ. Պոլսոյ մամուլը—բացի «Ազատամարտէն» — ընդհանուր համաձայնութեամբ խոհեմութիւն համարեց այս դիմումի մասին ոչէ բան չգրել, թիւրքերը չգայրացնելու համար։

Հոս վիճակը այնքան փափկացած է, և այնքան երկիւղալի են երևոյթները։

Ռուսահայոց վերջապէս քայլ մը առնելն յուսադրեց թիւրքահայը, որ մինչև հիմա տեսնուած անտարբերութենէն խորապէս զգացուած էր։

Մեր նոր վարչութիւնը՝ իրեն համար նուիրական պարտք պէտք է համարէ Ամենայն Հայոց կաթողիկոսը իրապէս ընել բոլոր անցուդարձերուն, և անոր խորհուրդներէն և թելադրութիւններէն, եթէ ունի, օգտուիլ։

Հայոց միակ յոյսը Ռուսիան է, և այս հաւատքը մանաւորապէս վերջին անցքերուն մէջ անգամ մը ևս հաստատուեցաւ։ Անգլիա, որուն երբեմն կոյր պաշտողներն եղած են հայերը, բացարձակապէս իր գոյութիւնը պահելու անարժան Թիւրքիոյ պաշտպանը կը հանդիսանայ ի վնաս քրիստոնեայ ազգերու, որոնց արիւնը քամելով կը պահէ Թիւրքիա դեռ իր գոյութիւնը։

Անգլիոյ այս ընթացքը խորապէս ազդած է, և շատեր կը կարծեն, թէ Անգլիոյ այս քաղաքականութիւնն է, որ արգելք կըլլայ Հայաստանի ռուսական գրաւման, որ միակ ելքն է Հայաստանի վիճակի բարւոքման համար։

Ռուսաստէր տրամադրութիւնը այնքան մեծ է Կ. Պոլսոյ մէջ, որ ռուսական տիրապետութենէն երբեմն սոսկացողները հիմա լռութեամբ կը հաւանին և անկէ դուրս ուրիշ փրկութիւն չեն տեսներ։

Անցեալին զարհուրելի սխալներն ուղղուած է հայերը, և ընդդէմ անգլիական անսիրտ քաղաքականութեան խորունկ ատելութիւն մէ կը տիրէ հայոց մէջ։

Պուէնկարէի առաջարկներու դէմ Անգլիոյ՝ Թիւրքիոյ վատթար վարչութիւնը չը նեղելու համար ցոյց տուած հոգածութիւնը Անգլիոյ Արևելքի ճնշուած ազգերու մէջ վայելած համակրութեան մեծ հարուած մը կուտար, մինչ ռուս կառավարական թերթերու և պետական անձնաւորութեանց սլաւոնասէր տրամադրութիւնը և դէպի Մօտաւոր Արևելքի ճնշուած, կեղեքուած և հարստահարուած ժողովուրդները ցոյց տուած համակրութիւնը խորունկ տպաւորութեան մը ըրած է ինչպէս հայոց, նոյնպէս նաև ուրիշ ժողովուրդներու վրայ։

Ցոյները միշտ կը յուսան Ռուսիոյ պաշտպանութեան և գիտեն, թէ միայն Ռուսիոյ զօրութեան ակնածանքն է, որ զիրենք անվնաս կը պահէ այս երկրին մէջ։

Հայոց ռուսասէր այս տրամադրութիւնները մեր պաշտօնական շրջանակներու մէջ ալ արմատացած ըլլալով հանդերձ, զանոնք արտայայտելու միջոցները չեն մտածուիր դժբաղդաբար։ Փափաքելի է որ նոր վարչութիւնը առանց խոհեմութեան պայմաններու դէմ գործելու շրջահայեցութեամբ և զգուշաւորութեամբ կարենայ յարաբերութիւնը չունէր։ յոյներն ու ասորիք յոյն ու ասորի քարոզիչներով և քահանաներով լցուրէն հայոց աշխարհը։ Հայ մանուկ ու ծեր, այր ու կին Աւետարան լսում ու կարդում էին ասորերէն և յունարէն։ Ոչ օտար քարոզիչները և ոչ նրանց առաքողները եռանդ չէին խնայում յոյն ու ասորի գրով, լեզուով, գրականութեամբ սնդել հայոց միտքն ու հոգին և օր աւուր վանել հայոց լեզուն, սեփական փառքի գիտակցութիւնը, ինքնուրոյն ապրելու ցանկութիւնը հայոց միջից։ Հային հանում էին հայութիւնից և տեղը ասորուն և յոյնին դնում։

Դժբաղդաբար քրիստոնէութիւնը իր անխառն վիճակով չէ ընդունվում ու չէ մնում ազգերի մէջ։ Ամենայն ազգ իր կրօնի հետ միացնում է իր անհատական ու ազգային հակումները, աշխարհահայեացքը, ձգտումները, ազգայնացնում է, այնպէս է պաշտում։ Ասորին և յոյնը քրիստոնէութեան անուան տակ հայոց աշխարհում յոյնութիւն և ասորիութիւն էին տարածում։ Բարիք ու չարիք չը կայ աշխարհիս վրա. ամենայն ինչ բարի է ստեղծված, լոկ զէշ գործադրութիւնն է, որ բարին չար է դարձնում։ Քրիստոնէութիւնը բացարձակ բարիք է, բայց նրանով օտար քարոզիչները ջնջել կամեցան հայութիւնը։ Եւ ահա նրանց ցաւնած սերմերից մեր ազգի կործանումն էր ծնում։

Զարիքներն երկու տեսակի, երկու բնոյթ ունեն. կամ կայծակի յանկարծահաս շանթի նման ջախջախում, ջնջում են, կամ դարանակալ որդի նման կրծում, մաշում են արութիւնը, յոյներն ու ասորիք յոյն ու ասորի քարոզիչներով և քահանաներով լցուրէն հայոց աշխարհը։ Հայ մանուկ ու ծեր, այր ու կին Աւետարան լսում ու կարդում էին ասորերէն և յունարէն։ Ոչ օտար քարոզիչները և ոչ նրանց առաքողները եռանդ չէին խնայում յոյն ու ասորի գրով, լեզուով, գրականութեամբ սնդել հայոց միտքն ու հոգին և օր աւուր վանել հայոց լեզուն, սեփական փառքի գիտակցութիւնը, ինքնուրոյն ապրելու ցանկութիւնը հայոց միջից։ Հային հանում էին հայութիւնից և տեղը ասորուն և յոյնին դնում։

Դժբաղդաբար քրիստոնէութիւնը իր անխառն վիճակով չէ ընդունվում ու չէ մնում ազգերի մէջ։ Ամենայն ազգ իր կրօնի հետ միացնում է իր անհատական ու ազգային հակումները, աշխարհահայեացքը, ձգտումները, ազգայնացնում է, այնպէս է պաշտում։ Ասորին և յոյնը քրիստոնէութեան անուան տակ հայոց աշխարհում յոյնութիւն և ասորիութիւն էին տարածում։ Բարիք ու չարիք չը կայ աշխարհիս վրա. ամենայն ինչ բարի է ստեղծված, լոկ զէշ գործադրութիւնն է, որ բարին չար է դարձնում։ Քրիստոնէութիւնը բացարձակ բարիք է, բայց նրանով օտար քարոզիչները ջնջել կամեցան հայութիւնը։ Եւ ահա նրանց ցաւնած սերմերից մեր ազգի կործանումն էր ծնում։

Զարիքներն երկու տեսակի, երկու բնոյթ ունեն. կամ կայծակի յանկարծահաս շանթի նման ջախջախում, ջնջում են, կամ դարանակալ որդի նման կրծում, մաշում են արութիւնները մշակել ռուս պաշտօնական շրջանակներու հետ։

Ազգ. վարչութիւնը հետևաբար շատ դժուար դիրքի մը մէջ է և շատ փափուկ դեր մը ունի կատարելիք. և այս շատ նշանակելի դերը կատարելու համար կը կարօտի ներքին ներդաշնակութեան մը, որ զոյացնելու պիտի պարտաւոր ըլլայ այլազան տարբերէ բաղկացած վարչութիւն մը։

Պատրիարքն ալ զօրացած այս նոր վարչութեամբ՝ պարտաւոր է աւելի ուշադրութեամբ հետևիլ գործերուն և աւելի կանոնաւորութիւն դնել իր կեանքին մէջ։

Արշարունի պատրիարք պէտք է դիտնայ, թէ ազգի մը գլուխը ըլլալու պատասխանատու պաշտօնին մէջ գտնուող անձ մը չի կրնայ իր ուզածին պէս՝ անհոգ ու անփոյթ կեանք մը վարել, և ամեն բան sans façon-ութեան վերածել։

Նախ պէտք է որ պատրիարքարանի պաշտօնէութիւնը պիտնայ, թէ ազգին պատրիարքը ժբ կը գտնուի։ Երկրորդ՝ Արշարունի պատրիարք պէտք է ուշադրութեան առնէ պաշտօնական ձևակերպութիւնները և տան տարազով՝ խահուէ օջախներու մէջ չընդունի իրեն այցելող պետական պաշտօնատարները։ Հայոց պատրիարքը իր դիրքը պէտք է պահէ, կարենալու համար իր ձայնը լսելի ընել և պատկաելի հանդիսանալ։ Շառայլ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱՐԻՒՆՆԵՐ

Մերսին, 18 սեպտեմբեր

✦ Ադանայի վարժարանին խառնափընթոր վիճակին պատճառները գրած էի ձեզ։ Գրած էի, թէ ինչպէս տեղական և դաշնակցական ինտրիգներու երեսէն դպրոցին անօրէն Գույումճեան Մխսակ էֆենդին պարտաւորուած ըլլալով հրաժարիլ, դպրոցը երեսի վրայ մնացած էր և դպրոցին լաւագոյն ուժերն ևս ձգելով դպրոցն այլուր մեկնած էին։ Առաջնորդ Շահէ ծ. վարդապետ, որ այժմ դեռ Պոլիս է, Մխիթարեան դիմած էր, խնդրելով որ Ադանայի վարժարանն ևս իր վարչութեան ներքոյ առնու։

Մխիթարեան ժողովը, ինչպէս և ընդհ. ժողովը, կերևի դիտակ դրպրոցին կազմակերպութեան բովանդակ պատճառներուն, ստիպուեր է մերժել Ադանայի համակրելի և գործունեայ առաջնորդին առաջարկը, չուզելով անշուշտ Էնկերութեան համար դժուարութիւններու դուռ մը բանալ։

Շահէ վարդապետ այժմ ձեռնարկած է անկախ նոր ուժերով վերակազմել տեղացոց և կուսակցականաց քանդած Ադանայի մեծ դպրոցը։ Կըսուի թէ երկսեռ պաշտօնեաները ճամբայ եղած են արդէն և մօտերս կը հասնին։

Ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք։

✦ Սեբաստիոյ մէջ հաստատուած Սանասարեան վարժարանի տեսչութիւնը, որ, ինչպէս գիտէք, ստանձնած է պրոֆ. Ցովհ. Ցակոբեան, Մխիթարի անօրէն Ժողովոյ գործունեայ անդամը, համաձայնած է Մխիթարին հետ այս տարի 5 ձրիավարժներ ընդունիլ յիշեալ Ընկերութեան Կիլիկիոյ շրջանակի վարժարաններէն։

Այս մտօք որոշուած են երկու աշակերտ Հայ ընդէն, երկուքը Զէյթունէն և մէկը Քէսապէն։ Ասոնք իրենց շրջանը աւարտելէն ետք որոշ տարի մը, պաշտաւորը թոշակով, պէտք է պաշտօնավարեն Մխիթարի վարժարանաց մէջ։

Մխենոյն նպատակաւ հինգ ձրիավարժներ ևս, Ընդհ. Մխիթարեան նպաստով, Հայաստանի զանազան վարժարաններէ (Մխիթարին) պիտի ղրկուին Վանի վարժապետանոցը։

Մխիթարի ձեռամբ և Մխիթարեան նպաստով այս շրջանին Կիլիկիոյ մէջ չորս նոր վարժարաններ բացուեցան՝ Եփեսոսի, Դէօնմանները։ Հայութեան գլխին պարսից սուրն ու հուրը կայծակի շանթերի նման էր կախված. իսկ յոյնն ու ասորին, որպէս դարանակալ որդեր, հայ ժողովրդի գոյութեան ծառի արմատն էին մտել՝ կրծելու, նրա հոգին՝ ծծելու, նրա բերան՝ լեզուն անդամալուծելու։ Օտար քաղաքակրթութեան շունչը թռնաւոր, որ հղում էր հայկական ծաղիկ կեանքին, ու թօշնում էին թերթիկները, որ ձեռք էր մխում՝ դալկանում, թօթափում էին տերևները։

Կոյր էր հայը ու գնում էր դէպի անդունդ, դէպի վիհերն անյատակ. խուլ էր հայը ու չէր լսում որոտմունքը արհաւրալից ամպերի. համր էր հայը ու պատասխան չունէր բերնում թշնամուն։

Բայց կոյրերը իրանց հոգու աշխարհում մի բնաղդական լոյս ունեն. խուլերը՝ մի խուլ ձայն, համրերը՝ մի ներքին բարբառ։ Նրանք տեսնում, նրանք լսում, նրանք խօսում են մի անգամ անդունդի եզերքին, ահաւոր առիւծների բաց բերանների առաջ, եթէ միայն մեռնելու հիւանդ չեն դեռ։ Կարապի մի հառիկ երգն է այդ, բայց ինաշխարհիկ երգ։

Ցայտնի աւանդութիւն է, թէ պարսիկ զօրքերը պարտված Կրեսոս Թագաւորի ապարանքն արշաւեցին, ներս խուժեցին թագաւորական արքայի ներքին սենեակները։ Եւ մինչ պարսիկ զօրականը իր կացինը բարձրացրեց Կրեսոսի գանգը ցրելու, թագաւորի ի ծնէ համր որդին հօրն սպառնացող վտանգի սոսկումից հերոսական ղղաձգութեամբ, հոգու հուժկու թափով, ներ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԽՕՍՔ Ս. ՍԱՀԱԿԻ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ ՑՈՒՆԿՆ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ

Լուսացօղ դէմքեր, հայոց ոսկեդարի շողշող փայլ ու փառք, որ 1500 տարվայ հնութեան եռանկեայ ձեր համայն պայծառութեամբ, ձեր հոգու համակ վեհութեամբ կանգնած էք մեր մտքի առաջ. որ ձեր հեռատես աչքերի ազնիւ բիբերով դեռ նայում էք հայոց կիսաքանդ աշխարհին, հսկում այն ազգի վրա, որ դուք վերսին ծնաք, դաստիարակեցիք, պահեցիք, ձեր տաք ջնջովը ջեռուցիք, Սահակ ու Մեսրոպ, Մեսրոպ ու Սահակ, բիւր բերան փառք ձեզ, հազար ծնրադրութիւն ձեր առջև։

Ահա այն վառ լապտերով, որ դուք տընուիք մեր ձեռքը, դարերի խաւար ճամբէն լուսաւորելով այսօր դէպի ձեզ ենք գալիս. գալիս ենք տեսնելու մեր նախնեաց տառապանքի օրերը, տանջալից կեանքը, հիւանդ հայութիւնը, որին դուք բժշկեցիք, գերեզմանի բերանից դէպի կեանքը դարձրիք։ Գալիս ենք մեր սրտի լաւագոյն խունկը բուրելու ձեր առաջ, այն զողտրիկ անուշ լեզուով ներբողելու ձեզ, որով բուժեցիք մեր համրութիւնը, որով պարդարեցիք մեր բերանը, որով շանթահարեցիք թշնամուն, որով քաղցրացրիք մեր քիմքն ու կեանքը։ Փառք ձեզ, հայոց փոքրիկ աշխարհի մեծ հերոսներ։

Սէգ լեռներով երկնացած, ահեղ ձորերով ու հովիտներով երկրացած ու դաշտացած վանդակաձև կտրված մի երկիր, նման մեղրահացի բջիջների, ուր հայ ժողովուրդն էր ապրում։ Որքան հովիտ, այնքան կղզեացած գաւառ, որքան լեռ, այնքան իշխան ու նախարար, առանց բարոյական ու քաղաքական միութեան, անհաշտ, նախանձոտ, ատող ու անխաղաղ։ Մի ազէտ ժողովուրդ, մտնեսապէս կողոպտված իր իշխանների ձեռքով, անմխիթար, երերուն, անհաստատ։ Կորել էր հաւատը դէպի հին հեթանոսական հայ աստուածները, թագաւորել էր հայոց աշխարհում անբարոյականութիւնը դէպի բարին ու գեղեցիկը։

Այս քաղաքական, մտնեսական, կրօնաբարոյական անկման ու տգիտութեան հետևանքով հայոց աշխարհը օտարների ասպարէզ էր դարձած։ Պարսիկ, յոյն ու հոռոմայեցի իրանց սեաթոյր զօրքերով, իրանց՝ քանց ատողներն անհամար լէգէոնների մըրրիկներից հնք, թռչուններից թև առած գալիս, փուլում են ու մորեխի պէս ծածկում հայոց լեռ ու հովիտ, աւերում, կործանում երկիրը, գերի վարում ժողովրդին. օրաւուր միմեանց ետևից ու միմեանցից գաւառներ խլում, ազգերի ցանկից օրաւուր ջնջում հայ ժողովրդի անունը, խլում նրա ձեռքից գոյութեան իրաւաթուղթը և և այս չարիքի մէջ նպաստաւոր էին նրանց հայ դաւաճան նախարարները, ստոր հայ մատնողները, փառասէր վատերը։

Անմխիթար, լքեալ, արիւնապանդ անաւորութիւնից սարսափահար հայը ոչ մարմնի, ոչ հոգու մխիթարութիւն ունէր. դրսից՝ վիրաւոր, ներսից՝ ախտաւոր։

Քրիստոնէութիւնն ահա այս վիճակի մէջ գտաւ Հայաստանը, որ երկու ճանապարհով, նախ՝ Ասորիքի, ապա Փոքր-Ասիայի վրայով իր բարոյական-կրօնական կենդանարար շողերով մեր աշխարհը մտաւ։

Հոգևոր մխիթարութեան կարօտ հայ ժողովուրդը գրկաբաց ընդունեց քրիստոնէութեան առաքեալներին. իր թագ ու պսակ արքայի՝ Տրդատի գլխաւորութեամբ փարվեց հայոց աշխարհի Մեծ Լուսաւորչին. Աւետարանը որպէս բարոյական-կենցաղական օրէնսգիրք ընդունեց, որի վրա պիտի դաստիարակվէր հայը։ Քրիստոնէական սէրը, հեզութիւնը, յոյսը, զթութիւնը ապեղանին եղան հայ ժողովրդի վիրաւոր հոգուն, որ հիւանդ էր ատելութեամբ, ախտաւոր՝ հպարտութեամբ, ցաւագար՝ անզթութեամբ, ախտաժէտ՝ անյուսութեամբ։

Քրիստոնէական առաքինութիւնները առաջ բերին անձնազոհութեան հոգի յանուն գաղափարի. հերոսներ հանդէս եկան, նահատակներ, մարտիրոսներ, որոնց հաւատները նշնչվեց, թէ զոհաբերութիւնը միայն կենցաղական-բարոյական օրէնքի պահանջ չէ, որ փրկութիւն չը շահելու դէպքում կարող է որպէս յուսահատութիւն փոխել հերոսական ոգու վրա, այլ կենդանի Աստուծու պահանջ, որ հերոսներին վարձատրում է իր Նոր ու անանց թագաւորութեան մէջ։ Եւ այս հաւատը հային ազնիւ սխրագործութիւնների ճանապարհի վրա դրեց։

Սակայն հայը իր զիրն ու գրականութիւնը չունէր. յոյներն ու ասորիք յոյն ու ասորի քարոզիչներով և քահանաներով լցուրէն հայոց աշխարհը։ Հայ մանուկ ու ծեր, այր ու կին Աւետարան լսում ու կարդում էին ասորերէն և յունարէն։ Ոչ օտար քարոզիչները և ոչ նրանց առաքողները եռանդ չէին խնայում յոյն ու ասորի գրով, լեզուով, գրականութեամբ սնդել հայոց միտքն ու հոգին և օր աւուր վանել հայոց լեզուն, սեփական փառքի գիտակցութիւնը, ինքնուրոյն ապրելու ցանկութիւնը հայոց միջից։ Հային հանում էին հայութիւնից և տեղը ասորուն և յոյնին դնում։

Դժբաղդաբար քրիստոնէութիւնը իր անխառն վիճակով չէ ընդունվում ու չէ մնում ազգերի մէջ։ Ամենայն ազգ իր կրօնի հետ միացնում է իր անհատական ու ազգային հակումները, աշխարհահայեացքը, ձգտումները, ազգայնացնում է, այնպէս է պաշտում։ Ասորին և յոյնը քրիստոնէութեան անուան տակ հայոց աշխարհում յոյնութիւն և ասորիութիւն էին տարածում։ Բարիք ու չարիք չը կայ աշխարհիս վրա. ամենայն ինչ բարի է ստեղծված, լոկ զէշ գործադրութիւնն է, որ բարին չար է դարձնում։ Քրիստոնէութիւնը բացարձակ բարիք է, բայց նրանով օտար քարոզիչները ջնջել կամեցան հայութիւնը։ Եւ ահա նրանց ցաւնած սերմերից մեր ազգի կործանումն էր ծնում։

Զարիքներն երկու տեսակի, երկու բնոյթ ունեն. կամ կայծակի յանկարծահաս շանթի նման ջախջախում, ջնջում են, կամ դարանակալ որդի նման կրծում, մաշում են արութիւնները մշակել ռուս պաշտօնական շրջանակներու հետ։

Ազգ. վարչութիւնը հետևաբար շատ դժուար դիրքի մը մէջ է և շատ փափուկ դեր մը ունի կատարելիք. և այս շատ նշանակելի դերը կատարելու համար կը կարօտի ներքին ներդաշնակութեան մը, որ զոյացնելու պիտի պարտաւոր ըլլայ այլազան տարբերէ բաղկացած վարչութիւն մը։

Պատրիարքն ալ զօրացած այս նոր վարչութեամբ՝ պարտաւոր է աւելի ուշադրութեամբ հետևիլ գործերուն և աւելի կանոնաւորութիւն դնել իր կեանքին մէջ։

Արշարունի պատրիարք պէտք է դիտնայ, թէ ազգի մը գլուխը ըլլալու պատասխանատու պաշտօնին մէջ գտնուող անձ մը չի կրնայ իր ուզածին պէս՝ անհոգ ու անփոյթ կեանք մը վարել, և ամեն բան sans façon-ութեան վերածել։

Նախ պէտք է որ պատրիարքարանի պաշտօնէութիւնը պիտնայ, թէ ազգին պատրիարքը ժբ կը գտնուի։ Երկրորդ՝ Արշարունի պատրիարք պէտք է ուշադրութեան առնէ պաշտօնական ձևակերպութիւնները և տան տարազով՝ խահուէ օջախներու մէջ չընդունի իրեն այցելող պետական պաշտօնատարները։ Հայոց պատրիարքը իր դիրքը պէտք է պահէ, կարենալու համար իր ձայնը լսելի ընել և պատկաելի հանդիսանալ։ Շառայլ

գէլի, Ֆրէնդրիս և Կարադուրանի մէջ։ Ժամանակաւոր նպատակով դպրոցներ պիտի բացուին նաև Անտիոքի, Եակոբիէի, Կայաշլրկի (երկուքն ալ Քէսապի մօտ) և Ալաքաշ (Ուլնիա) գիւղերու մէջ։

Մ.-Նա

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԵՐԻ ՆԱՑԻՕՆԱԼԻԶՄԸ *)

(Որ էլ Դաշնակցութիւն կուսակցութեան ազգային քաղաքականութիւնից)

—

Ո՞վ խաբեց և ո՞վ խաբվեց. երիտասարդ-թիւրքերը խաբեցին Դաշնակցութեան, թէ ընդհակառակը։

Շատ միամիտ պիտի լինի ընթերցողը, եթէ պնդէ նա երկրորդ հարցը։

Երիտասարդ-թիւրքերի համար խիստ ցանկալի էր—և այդ հոգի վրա վերին աստիճանի ճարտիկ ու հեռատեսական էին նրանք իրանց շահերի տեսակէտից—որ բոլոր հպատակ ժողովուրդների վաղեմի ըմբոստ կուսակցութիւնները մօտենային իրանց և մշտական modus vivendi *կնքվէր երկուստեք։ Զօրեղը, տիրապետողը պիտի ծառայեցնէր սակառաթիւ տկարին՝ իբրև ստորադրված օրգանի՝ իր սեփական դիրիկիներին։ տա մի հանրածանօթ փաստ է ինչպէս ամենուրեք, այնպէս էլ Թիւրքիայում։ Հմայել, մեծարել և ազդեցիկ դերք պէտք է տալ վաղեմի ըմբոստ կուսակցութեանը իր ազգային իրականութեան մէջ, որպէսզի նա բարձր ու անխախտ պահպանէ տիրապետող ոյժի—տուեալ կառավարական կուսակցութեան—հեղինակութիւնը և ժողովրդական կրեդիտը։ Այսպէս ուրեմն, որպէսզի Դաշնակցութիւնը ապահովէր ու ամրապնդէր իր տիրական պօղիցիաները, պէտք է միաժամանակ տիրապետող կառավարական կուսակցութեան օրգանի դերը խաղար թէ պարլամենտում և թէ դուրսը։ Եւ նա խաղաց այդ դերը առանց քաշվելու, չորս տարի շարունակ, անխնայ ոտնհարելով իր ծրագրային սրբոքմիին սրբոցը, ուղիղ այն սկզբունքները, որոնցով մօտենում է նա մի կողմից աշխատաւոր մասսային և յայտարարում նրան, իբր սօցիալիստ կուսակցութիւն, միւս կողմից բովանդակ Թիւրքահայ ժողովրդին—որպէս ազգային ճնշված ու հալածված հատուածի—և յայտարարում նրան, իբր նրա բոլոր շահերի միակ ու հարազատ հաւատարմատարը։*

Նախազգում եմ այս կէտում ևս, որ վաղեմի՝ տրադիցիաներով տակաւին «բարեպաշտ» դաշնակցականներ պիտի «փոքր ինչ» խիստ համարեն վերջին դատավճիռս կուսակցութեան հասցէին, ուստի հետեւեալ երկու հարցով ցանկանում եմ յարգելի «տրադիցիօնալիստներին» աւելի համոզել հիմնաւորումներիս և դիտողութիւններիս օբիեկտիվ ճշմարտութեան մէջ։

Ես կանգնում եմ մի բօպէ Դաշնակցութեան ծրագրի տեսակէտի վրա, հաղնում եմ աչքերիս հետեւողական ու խստապահանջ դաշնակցականի ակնոցներ և ուղղում կուսակցութեան հետեւեալ հարցերը.

Ասացէք խնդրեմ, ինչ իրաւունքով և արդարացիութեամբ թոյլ է տալիս իրան միջազգային սօցիալիզմի մեծ ընտանիքում հիւրընկալված մի կուսակցութիւն պարլամենտական հողի վրա (այն ևս Թիւրքիայի նման մի երկրում) օժանդակ մարմինը դառնալ կառավարական կուսակցութեան, ասել է նաև՝ կառավարութեան, մինիստրական կաբինէտի և նոյնիսկ ձգտել իր ֆրակցիայի անդամներից մինիստրներ ընտրելու։ Չէ որ Ամատերդամի միջազգ. սօցիալիստական կուսակցութիւնները մի բեզօլուցիայով պարտադրել է սօցիալիստական կուսակցութիւններին բլօկի մէջ չը մտնել երբէք տիրող բուրժուական կուսակցութիւնների հետ և չը ձգտել կառավարական պօրտֆէյլներ ստանձնելու դաւանական ծեռնարկների։ և չէ որ դուք մեծ ընտանիքի շեմքը մուտք կոխելու համար ընդունված էք յայտարարել այդ կէտերը ձեր կողմից։ Չէ որ հէնց այդ բեզօլուցիայով տապալվեց նախկին Ժօրէսիզմը՝ իր մինիստրական տակտիկայով և à la Միլլերան արկածախնդիր էքսպէրիմենտներով։ Սօցիալիստական կօնգրեսը դատապարտում էր Ժօրէսի նախկին (ասում ենք նախկին, որովհետև այժմ գոյութիւն չունի ժօրէսիստական ազդեցիկ ֆրակցիա և տակտիկա։ այդ փառահեղ դէմքը ինքը ևս զգալով իր գործնական սխալ քայլերը՝ իր հաւատարիմ ընկերներով միացաւ գետիստական (մարքսիստական) ֆրակցիայի հետ) տակտիկը Ֆրանսիայի նման մի երկրում, հանրապետական կառավարութեան շրջանում։ ուրեմն որքան աւելի դատապարտելի են ձեր քայլերը Թիւրքիայի նման մի երկրում՝ պանիսլամիստական կուսակցութեան ամսոհովանու ներքոյ, զոհել ծրագրային սօցիալիզմը Թիւրքական նացիօնալիզմին, աշխատաւոր ժողովրդի շահերը՝ կուսակցութեան հրամայած «խոշոր պատառներին»։ Լինել կառավարական ստորադրված ֆրակցիա՝ նշանակում է զրկել իրան օպպօզիցիայի բոլոր դիրքերից։ բայց ասացէք, կայ աշխարհի երեսին մի անկիւն, նոյնիսկ ամենաազատ ու առաջադէմ երկրում, ուր մի սօցիալիստական կուսակցութիւն ինքնաբերաբար զրկէ իրան օպպօզիցիայից, ասել է՝ բարոյական խաչ դնէ իր քաղաքական գոյութեան վրա։

Երկրորդ հարց։ Ասացէք խնդրեմ, ինչ բարոյական իրաւունքով և քաղաքագիտական հաշիւներով անխախտ պահպանեց Դաշնակցութիւնը իր բարեկամական յարաբերութիւնները երիտասարդ Թիւրքերի կառավարական կուսակցութեան հետ Ադանայի ջարդերից յետոյ։ Մնալ բարեկամ, ընտրութիւններին բլօկ կազմել՝ ասել է աջակցել մի կուսակցութեան, որի իշխանութեան օրով արևան առուակներ հոսեցին այն ժողովրդի երակներից, որի շահերի ներկայացուցիչը և իրաւունքների հաւատարմատարը իրան է վերագրում Դաշնակցութիւնը։... Սա արդէն մի այնպիսի աղաղակիչ փաստ է, որի որակման համար մենք խօսք չենք գտնում ժուրնալիստական լեքսիկոնում։ Ձեր կուսակցական ֆրակցիայի աչքի առաջ տեղի չէին ունենում այն փոթորկալից դեմոնստրացիաները, որ հերոսաբար կազմում էին ալբանական պատգամաւորները Թիւրք կառավարութեան և «Մ. ու Ա.» կոմիտէի դէմ։ Դրանք պատգամաւորներ են այն ժողովրդի կողմից, որ զինված բանակներով, զէնքի շաչիւնով հարկադրում է, աւելի ճիշտ՝ կորզում կառավարութեան ձեռքից բէֆօրմներ։ հրապարակական զինակուին միացնում է ալբանացին իր պարլամենտական քննադատական կռիւը։ Իսկ դուք պատգամաւորներն էք այն ժողովրդի, որ անզէն փովում է զետնին, անխնայ արի է անցվում, առանց կռի ու դիմադրութեան։ նշանակում է ձեր պարլամենտական կռիւը, օպպօզիցիան, դեմօնստրացիան պէտք է եռակի սաստկութեամբ տեղի ունենային, եթէ դրանց հաւելն նոյնիսկ փակէին ձեր առաջ պարլամենտի դռները։... Ալբանացի պատգամաւորները չեն յայտարարում իրանց սօցիալիստներ և ոչ էլ հասկանում են սօցիալիզմից որևէ բան։ բայց մի շատ թանգագին յատկութիւն ունեն նրանք։ նրանք չը գիտեն էժանագին դրօշակներ ծածանեցնել՝ պապղուն ֆիրմաներով և տեսական իդէալներ շահագործել՝ կուսակցական ապեկուլանտ գեշէֆտների համար։ ալբանացիք ապատ են՝ ի պատիւ իրանց, կուսակցական ռաֆիներտ քաղաքականութիւնից, և անկեղծ լեռնականների ցաւագաց յուզումներով՝ գիտեն հարկաւոր բօպէներին իրանց պարլամենտական ապտակները հասցնել օրինակ ալեկոծութեան ահեղասաստ յորձանքով քանդեց, խորտակեց լեզուի կապանքներն ու աղաղակեց սպանչի երեսին։ «Ցեռ տար ձեռքդ, անօրէն, չՑս տեսնում առյդ աշխարհի տէր՝ մեծն Կրեսոսն է կանգնած»։

Ցունական ու ստորական նուրբ դիւանագիտութեան արիւնծարաւ նշաւակը վարեց, պարսկական շառաչող սուրը՝ վերից ցցվել ու կախվել էին հայի դիմաց, հայի գլխին։ Իր հոգու նրբին թելերով, իր ջղերի ահեղ ցնցումով շարժվեց հայը վանդի բերանում. նրա խոցված հոգին ծովերից հոգմ, լեռներից՝ ոյժ, կայծակից թափ առաւ, ներքին ուժգնութիւնից արձակվեցին լեզուի կապանքները, ընկաւ աչքերի վարագոյրը, բացվեցին լսելիքը։ Նա տեսաւ, նա լսեց, նա որոտաց դարանակալ թշնամիների երեսին. «Ցեռ քաշիր ձեռքդ, անօրէն, չՑս տեսնում, մեծ հայութիւնն է քո առջև կանգնած»։

Այս ալեկոծ հոգու ջղաձգութիւնից, երկունքի ցաւերից, ներքին ապգնապից ծնան երկու լուսաշաղ դէմքերը՝ Սահակ ու Մեսրոպ, հայոց աշխարհի զուարթուն պահապանները։ Նրանք կոյր հայութեան բացված ազնիւ աչքերի բիբերն են, խուլ հայութեան՝ բուժված լսելիք, համր հայութեան անուշ բարբառը, խիղճը՝ հայութեան, միտքը լուսաւոր, ահեղասաստ ձայնը թշնամիների երեսին, անմահութիւնը հայութեան։

Երկուսն էլ պալատական անձեր, ժամանակի օտար գիտութեանց մեծ գիտնականներ՝ թողին իրանց անձնական փառքը, թողեցին իրանց անձնական հանգիստն ու երանութիւնը, անապատների վերարկուն հագան. մէկը Լուսաւորչի Գահը բազմեց, որպէս փարոս լուսատու, միւսը հայ խաւար ժողովրդի խորունկ խաւերն լեցաւ՝ հոգու ճրագն ի ձեռին։

Քարոզեցին Աստուած և հայրենիք։ Բայց հարկ էր, որ հայ մանուկը հայերէն կարդար, հայ քարոզչին լսէր, հայ փառքերը հայ գրքի մէջ տեսնէր։ Տաղնապեցին այս խնդրով Սահակ ու Մեսրոպ իրանց հանճարին և Աստուծոյ օգնութեանն ապաւինելով՝ հայոց գիրն ստեղծեցին։

Երանի՛ այն աչքերին, որոնք տեսան այն երկնային հանդէսը երկրի վրա, երբ ս. Մեսրոպը Ս. Գրքի լաւագոյն գիրքը՝ իմաստունի «Առակաց» թարգմանած ու գրված Հայաստան եկաւ։ Հայրապետ ու թագաւոր, իշխան ու ժողովուրդ, մայր ու մանուկ ընդառաջ ելան աստուածաշնորհ առաքեալին, հայոց գիրը համբուրիւ ընդունեցին, ուցնծաց հայոց աշխարհ իր փրկութեան արշալոյսը ողջունելով։

Բազմացան վանքեր, նրանց սիրող գրիչկում բուսան հայ վարժարաններ, յանուն հայրենիքի փրկութեան ամուսնաւոր վանականներ ընտանեկան հոգսից ազատ մնալու համար՝ ամուրի հռչակվեցին, անձնատուր եղան վարժապետութեան, վարդապետութեան, գրականութեան, գիտութեան։ Հայոց գիրը ոգիացաւ ու ոգի տուեց հայութեան։ Հայոց վարժարաններն աւարտած ընտիր վանականներ արտաքին գիտութիւնները Հայաստան բերելու համար դեզերեցին Բիւզանդիայի, Աթէնքի, Ալէքսանդրիայի բարձրագոյն դպրոցներում ու լոյս բերին Հայաստան։ Յոյն ու ասորի քարոզիչները կնճռոտ դէմքերով, կախ ընկած շրթունքներով զրկեցին իրանց աւետարաններն ու դասագրքերն ու եկան Հայաստանից, երբ հայոց աշխարհի փրկութեան շեփորը հայացի հնչեց։

Մեծ Սահակի և Մեսրոպի ցանած սերմերը Վարդանանք Աւարայրի դաշտում հընձեցին, ծաղկեցին սքանչելի ձեռագրերի մէջ որպէս արուեստ ու դեղարուեստ, արձանացան հայ աշխարհի երեսին՝ որպէս սքանչելի ճարտարապետական շէնքեր ու վանքեր, բացվեցին հայ կանանց սրտում որպէս համեստութիւն ու մաքրութիւն, փայլեցին հայ ընտանիքում որպէս ջինջ հայելի՝ որ բիծ չունի, նաղանքով օրօրվեցին հայոց դաշտերում որպէս սէր ու քաղցրութիւն, հրաշագործեցին որպէս տոկունութիւն, կանգնեցին հայոց աշխարհի սրտում որպէս փրկարար դրօշակ, որպէս անմահութիւն հայութեան, ծառացան որպէս ազատութիւն, փայլեցին որպէս յոյս, բարձրացան որպէս հաւատ ու կազմեցին, յօրինեցին հայկական սրտերի միութիւնը։

Ազատ էր այժմ հայի հոգին, իսկ երբ ազատ են հոգիները, ծանր չեն ձեռքի շղթաները։

Ահա թէ ովքեր են Սահակ ու Մեսրոպ, որոնց անունն այսօր ցաք ու ցրիւ հայութեանը պահ մի սիրոյ օղակով շղթայել ու բերել է ուխտի նրանց սուրբ յիշատակի առաջ։

Բայց ծիլ է տօնում նրանց սուրբ գործի 1500 ամեակը. մենք ի՞նչ բարոյական իրաւունքով. հայ աշակերտը, որի բերանում հայոց լեզուն մեռել է. հայ աղջիկը, որի ականջին հայերէնն անուշ չի հնչում. հայ պատանին, որ հոգու հմայքով չի կարդում՝ «Մայրենի լեզու, մայրենի բարբառ, սիրտ, ընտանի իմ հոգու համար». հայ ծնողը, որ շշնջում է որդուն՝ «տղա, հայերէն մի սովրի, գերմաներէնի ժամանակ չը կայ». հայ գրողը, որ Մեսրոպի ազնիւ բառգիրքը հայհոյանքով ճոխացրեց. հայ կայսրը, որ Մեսրոպի գրով մահավիճռ արձակեց Աբել եղբօր դէմ. հայ կինը, որի ստինքները ցամաք են իր որդու համար. հայ ամուսինները, որ իրար չեն հանդիպում. հայ ազատ քահանան, հայ համր ու անարժան վարդապետը, հայ քարացած եկեղեցին՝ որ կենդանութեան ջուր չունի իր ցամքած աղբիւրում. ատելութեամբ փեռեկված հայը, անգրագէտ, անուս, մոլորված գիւղացին, անտարբեր քաղաքացին։

«Ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան»։

Օ՜, լեռ լաւ է. այլասերման ահաւոր դրուագներ է ցուցահանդէս դրել արդի հայութիւնը. և ահա, ահա մթան մէջ տեսնում եմ էլի գալիս են, Հայաստան են գալիս ասորին ու յոյնը, իրանց գրքերն ու աւետարանները գրկած... Իսկ պարսիկը՝ իր նիզակն է սրում։

Այս տխուր, այս սրտաճմլիկ պատկերի առաջ մերթ-մերթ այրված հոգիս դէպի անմահ Մեսրոպի հոգին է կանչում.

Եթէ Պռոշեանի, Բաֆֆու, Շիրվանզադէի, Ահարոնեանի, Յովհաննիսեանի երկասիրութիւնները գրված լինէին Գոգոլի, Տուրգենեվի, Դոստոյևսկիի, Անդրէեվի, Տոլստոյի, Գորկիի և այլոց երկասիրութիւնների կողքին, հասկանալի է, որ հայ ինտելիգենտը պիտի մտենայ վերջիններին հէնց այն հասարակ պատճառով, որ նրանք կազմում են վերջին խօսքը այն կուլտուրայի, որով սնվել է նա։

Հետևապէս քանի որ հայ կուլտուրան ենթակայ կը լինի որևէ հարևան կուլտուրայի, քանի որ հայ ժողովուրդը մասնաւորապէս և կովկասեան մասը ազգութիւնները ընդհանրապէս իրանց ներքին կազմի մեխանիզմով մի մի ինքնուրոյն միաւոր չեն կազմի ազգութիւնների ընտանիքում, քանի որ նրանց լեզուն չի դառնայ մի անհրաժեշտ գործօն, թէ հայ, թէ վրաց և թէ թուրքաց թատրոնները կը մնան նոյն խղճուկ դրութեան մէջ, և այն բոլոր վայելչութիւնները, թէ թատրոն չեն յաճախում, դերասաններ, պիէսներ չունենք և այլն, կը մնան նոյն յաւէտ վայելչութիւնները։

Այդ է, մեր կարծիքով, ամենագլխաւոր պատճառը ազգային թատրոնի անաջողութեան։

Միւս անգամ կը ծանրանանք մեր բեցենզենտների վրա։ Մ. Ղահրամանեան

Բաքու

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Որովհետև առաջին ընտրութեան ժամանակ Թիֆլիսի ընդհանուր կուրիայի III ընտրողական բաժնի ձայներից, մի շարք սխալների պատճառով, բաւականին ձայներ ոչնչացել են, ուստի նախազգուշացնում ենք ընտրողներին, որ ընտրական թերթիկների վրա չը պէտք է նկատողութիւններ գրել, չը պէտք է ստորագրել, ծրարում մէկից աւելի ընտրական թերթ չը դնել, ծրարի վրա ոչինչ չը գրել, իսկ անուանական յայտագիրը ներկայացնել առանձին, չը դնել ծրարի մէջ։

Նրանք, որոնք ծրարը չունեն, կարող են ստանալ քուէարկութեան դպիլճում։

Ընտրողական իրաւունք ունեցողները թող չը խուսափեն մասնակցութիւնից և շտապեն այսօր կատարելու իրանց քաղաքացիական պարտքը գիտակցօրէն։

Ընտրութեան բաղդը շատ անգամ կախված է նոյն իսկ մի ձայնից։ Թող ուրեմն ամեն մի ընտրող այսօր գայ իր ձայնը տալու։

Աշխատեցէք ձեռք բերել պատրաստի ընտրական թերթեր։

—

Այսօր առաւօտից Թիֆլիսի քաղ. դումայի դահլիճում քաղ. վարչութեան անդամ Մ. Աթաբէկեանի նախագահութեամբ տեղի կունենան ընդհանուր կուրիայի պատուիրակների ընտրութիւնները 3-րդ ընտրողական բաժնի կողմից։ Պայքարը մղվում է սօց.-դեմօկրատների և առաջադիմականների միջև։ Վերջինների թեկնածուներն են՝ 1) իշխ. Գ. Մ. Թումանեան, ըստ ընտր. ցուց. № 2960, 2) բժ. Կ. (Գեբասիմ) Ն. Ստեփանեան, № 2664 և 3) Ե. Խունունց, № 3127.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսում տեղի ունեցան գոհաբանական մաղթանքներ Գահաժառանգ Արքայորդու առողջութեան համար Միքայէլեան հիւանդանոցում, Նահանգական դատարանում, մահմեդականների մզկիթում և այլ տեղերում։ Վրաստանի էկզարխութեան բոլոր եկեղեցիներում լինելու են մաղթանքներ մինչև Գահաժառանգի ապաքինումը։

✦ Երէկ, հոկտ. 13-ին, Վանքի աւագ եկեղեցում մատուցվեց պատարագ, իսկ բա-

«Դու, որ հանճարիդ հպօր թափով երկնքից խլեցիր հայոց գիրն ու Հայաստան բերիր. դու, որ գրի տակ հոգի դրիր, ա՛ռ, առ յետ տար, երկրից երկինք քաշիր քո գիրը, որ էլ հոգի չունի իր մէջ, այլ լոկ մեռցնող տառ է դարձել. չէ՞ որ ասված է. «Գիրն մեռուցանէ, հոգին է որ կեցուցանէ»։

Բայց չէ, չէ՞... ով վեհ հոգիներ՝ Սահակ ու Մեսրոպ. պ՞ութեան աչքով նայեցէք մեզ վրա ձեր անսահման բարձրութիւնից. ձեր կենդանի շունչը մէկ էլ փչեցէք այս հոգով ոսկրացած ժողովրդի վրա, ու թող կենդանանայ, ու ձեր ցոյց տուած ճանապարհի վրա կանգնի։ Վատառողջ մթնոլորտից թոյն է ծծում հայութիւնը. ձեր օրհնութիւնը՝ որպէս դեղթափ զրկեցէք այս հեգ ժողովրդին։ Դուք այդ կարող էք անել, դուք անմահ էք։ Լաւ բանը չէ մեռնում աշխարհում, ոչ հողեղէն, ոչ հոգեղէն. ոչ ձեր մարմինն է մեռած, որ հայ հոգերին է յանձնված, որից հոգու և մարմնի անուղղելի անուն ենք առնում, ոչ էլ ձեր հոգին, որ ապրում է մեր մտքերի, զգացմունքների, մեր հաւատքի, մեր գիտութեան մէջ։ Դուք մեր մէջ և մենք ձեր մէջն ու ձեզանով կենդանի. դուք արմատն ու մենք ձեզնում հաստատված ճիւղեր։

Մշոյ դաշտի՛ ալ վարդ, անթառամ, անուշբոյր զոյգ ծաղկունք, մեր նախնեաց արցունքով ցօղված, համբոյրներով պաշտված սուրբեր, օրհնեալ լինի ձեր յիշատակ, փառք ձեզ, անմահ հերոսներ։

Բենիկ վարդապետ

բաղոյն դպրոցներում ու լոյս բերին Հայաստան։ Յոյն ու ասորի քարոզիչները կնճռոտ դէմքերով, կախ ընկած շրթունքներով զրկեցին իրանց աւետարաններն ու դասագրքերն ու եկան Հայաստանից, երբ հայոց աշխարհի փրկութեան շեփորը հայացի հնչեց։

Մեծ Սահակի և Մեսրոպի ցանած սերմերը Վարդանանք Աւարայրի դաշտում հընձեցին, ծաղկեցին սքանչելի ձեռագրերի մէջ որպէս արուեստ ու դեղարուեստ, արձանացան հայ աշխարհի երեսին՝ որպէս սքանչելի ճարտարապետական շէնքեր ու վանքեր, բացվեցին հայ կանանց սրտում որպէս համեստութիւն ու մաքրութիւն, փայլեցին հայ ընտանիքում որպէս ջինջ հայելի՝ որ բիծ չունի, նաղանքով օրօրվեցին հայոց դաշտերում որպէս սէր ու քաղցրութիւն, հրաշագործեցին որպէս տոկունութիւն, կանգնեցին հայոց աշխարհի սրտում որպէս փրկարար դրօշակ, որպէս անմահութիւն հայութեան, ծառացան որպէս ազատութիւն, փայլեցին որպէս յոյս, բարձրացան որպէս հաւատ ու կազմեցին, յօրինեցին հայկական սրտերի միութիւնը։

Ազատ էր այժմ հայի հոգին, իսկ երբ ազատ են հոգիները, ծանր չեն ձեռքի շղթաները։

Ահա թէ ովքեր են Սահակ ու Մեսրոպ, որոնց անունն այսօր ցաք ու ցրիւ հայութեանը պահ մի սիրոյ օղակով շղթայել ու բերել է ուխտի նրանց սուրբ յիշատակի առաջ։

Բայց ծիլ է տօնում նրանց սուրբ գործի 1500 ամեակը. մենք ի՞նչ բարոյական իրաւունքով. հայ աշակերտը, որի բերանում հայոց լեզուն մեռել է. հայ աղջիկը, որի ականջին հայերէնն անուշ չի հնչում. հայ պատանին, որ հոգու հմայքով չի կարդում՝ «Մայրենի լեզու, մայրենի բարբառ, սիրտ, ընտանի իմ հոգու համար». հայ ծնողը, որ շշնջում է որդուն՝ «տղա, հայերէն մի սովրի, գերմաներէնի ժամանակ չը կայ». հայ գրողը, որ Մեսրոպի ազնիւ բառգիրքը հայհոյանքով ճոխացրեց. հայ կայսրը, որ Մեսրոպի գրով մահավիճռ արձակեց Աբել եղբօր դէմ. հայ կինը, որի ստինքները ցամաք են իր որդու համար. հայ ամուսինները, որ իրար չեն հանդիպում. հայ ազատ քահանան, հայ համր ու անարժան վարդապետը, հայ քարացած եկեղեցին՝ որ կենդանութեան ջուր չունի իր ցամքած աղբիւրում. ատելութեամբ փեռեկված հայը, անգրագէտ, անուս, մոլորված գիւղացին, անտարբեր քաղաքացին։

«Ամենեքեան խոտորեցան ի միասին և անպիտանացան»։

Օ՜, լեռ լաւ է. այլասերման ահաւոր դրուագներ է ցուցահանդէս դրել արդի հայութիւնը. և ահա, ահա մթան մէջ տեսնում եմ էլի գալիս են, Հայաստան են գալիս ասորին ու յոյնը, իրանց գրքերն ու աւետարանները գրկած... Իսկ պարսիկը՝ իր նիզակն է սրում։

Այս տխուր, այս սրտաճմլիկ պատկերի առաջ մերթ-մերթ այրված հոգիս դէպի անմահ Մեսրոպի հոգին է կանչում.

կում կատարվեց հանդիսաւոր հոգեհանդիստ համազգային տօնի առիթով։ Եկեղեցում երգում էր Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը։ Պատարագին և հոգեհանգստին ներկայ էին Թիֆլիսի բոլոր հայ թեմական և եկեղեցական-ծխ. դպրոցների աշակերտ-աշակերտուհիները իրանց ուսուցչական կազմերի հետ։ Եկեղեցում սրտառուչ ճառ խօսեց Բենիկ վարդապետը հայ տառերի նշանակութեան մասին, որոնք սակայն մեր օրերում այժմ արհամարհված են հայութեան մի քանի խաւերի կողմից, որովհետև հայոց լեզուն սկսում է խորթանալ, օտարանալ։

◆ Երէկվայ հոգեհանգստին ներկայ էր ամբողջ հայ հոգևորականութիւնը։ Կային նաև պետական դպրոցի հայ սաներից, որոնք այդ օրը ազատ էին իրանց զբաղմունքներից։

◆ Այսօր Վանքի եկեղեցում կը լինի Հայրապետական մաղթանք։

◆ Երէկ Ներսիսեան դպրոցում առաւօտեան և Յովհաննեան օրիորդաց դպրոցում երեկոյեան կայացան աշակերտական հանդէսներ տառերի գիւտի յօբելեանի առիթով։

◆ Գրակ.-Գեղագիտ. Սալօնի կողմից Էջմիածին Յօբելեանական Կենտրօնական Կոմիտէին երէկ ուղարկվեց հետեւեալ հեռագիրը. «Գրական-Գեղագիտական Սալօնում ժողովվելով Սալօնի սովորական յաճախորդները և Թիֆլիսի հայ ինտելիգենցիայի մեծ բազմութիւն, նաև ուսներ, վրացիներ և օտարերկրեայ գաղութների ներկայացուցիչներ, առանձին հանդիսաւորութեամբ տօնեցին այսօրվայ ազգային մեծ յիշատակը և որոշեցին իրանց միահամուռ շնորհաւորութիւնները ու որդիական ակնածութիւնը բերել Նորին Սրբութիւն Վեհափառ Կաթողիկոսին։ Ստորագրեցին պատուաւոր նախագահ Գէորգ Բարխուդարեան, նախագահ՝ բժշկ. Բ. Նաւասարդեան, Սալօնի տէր-տնօրէն՝ Տ. Նազարեան»։

◆ Թիֆլիսի քահանայական դասը շնորհաւորական հեռագիր ուղարկեց Էջմիածին համազգային յօբելեանի առիթով։

◆ Մեզ խնդրում են յիշեցնել, որ այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, Թիֆլիսի յուսնաց Նիկոլայեվսկի եկեղեցում (5-րդ քաղաքամաս, Սոֆիյսկայա փողոց, Խարիտոնով) նշանակված է մաղթանք Ցունաստանի, Սերբիայի, Բոլգարիայի և Զերնոգօրիայի զէնքի աջողութեան համար։

◆ Հոկտ. 11-ին կայացած ժողովում տառերի գիւտի յօբելեանի առիթով ընտրված մանաժողովի անդամների թւում բաց է թողված տ. Նինա Դոլուխանեանի անունը։

◆ Վաղվանից Թիֆլիսի քաղ. ինքնավարութեան զինուորակոչական առանը կը սկսէ իր գործունէութիւնը երիտասարդներին զինուորական ծառայութեան կոչելու համար։ Առանի կազմը հետեւեալն է. նախագահ՝ քաղաքագլուխը, անդամներ՝ զինուորական իշխանութեան կողմից գաւառական զինուպետ գնդապետ Ժդէնտի, ոստիկանութեան կողմից 9-րդ ոստիկ. պրիստաւի օգնական Զինովիչ, քաղաքային դումայի կողմից՝ ձայնաւոր Վ. Թամամշեան և Մ. Քանանեան, բժիշկներ՝ զինուորական բժիշկ Շպակովսկի և քաղաքային բժիշկ Զինկեվիչ։ Վիճակահանութիւնը կը սկսվի երեքշաբթի օրվանից, իսկ 17-ին կը լինի բժշկական քննութիւնը։

◆ Բարձրագոյն հրամանով պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի կառավարիչ կամերգէր Բէլօբրազովը նախագահելու է հոկտեմբերի 20-ին այն ժողովում, ուր ռուս պատուիրակները ընտրելու են մի պատգամաւոր Պետական Դումայի համար Անդրկովկասի ռուս ազգաբնակութեան կողմից։ Ընտրութիւնը կը կայանայ քաղ. դումայի նիստերի դահլիճում։

◆ Թիֆլիսում մի խումբ անձեր նախագծել են հիմնել պոլիտեխնիկումային մասնաւոր դասընթացքներ երկսեռ ուսանողների համար։ Կանոնադրութիւնը ներկայացված է պատշաճ իշխանութեան ի հաստատութիւն։

◆ Կովկասի փոխարքան թոյլատրել է էժան գնով քաղաքային հողաբաժիններ ձեռք բերել Նաթլուղում կախէթիայի երկաթուղու պէտքերի և Թիֆլիսի պոլիտեխնիկումի համար։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի վարչութեան մէջ գեղեցիկ միտք է յղացել՝ պարբերաբար երեկոյթներ կազմակերպել էլեքտրաքարշի ծառայողների զաւակների համար։ Այդպիսին առաջին անգամ եղաւ հոկտեմբերի 6-ին «Վիրա» թատրոնում 800 երեխաների ներկայութեամբ։ Երեկոյթը շատ հաճելի տպաւորութիւն թողեց բոլորի վրա։

◆ Թիֆլիսի նահանգապետը հրահանգով առաջարկեց Թիֆլիսի գաւառապետներին և ոստիկանապետին. 1) այսուհետև տալ նոր և փոխարինել հին վկայականները բացառապէս պարզ տեսակի և սառը զէնքերի պահելու և կրելու համար 5 տարի ժամանակով. 2) յայտնել զինախանութների տէրերին, որ զէնք գնելու վկայականները այսուհետև տրվելու են ծանօթութեամբ՝ թէ այդ վկայականները ոյժ ունեն սոսկ 3 ամիս տրված օրից, իսկ ինչ վերաբերում է սկզբում տրված վկայականներին, դրանցով զէնքեր վաճառելը կարելի է միայն մինչև յունվարի 1-ը 1913 թ.։

◆ Լոյս 12-ի գիշերը մեր խմբագրատան ծառայ Կուզմա Մօնախովը, 19 տարեկան, Սալալակայա փողոցի վրա թոյն խմեց և հիւանդանոց տանվելիս ճանապարհին մեռաւ։ Պատճառը դեռ յայտնի չէ։

◆ Վաղը Արտիստական թատրոնում հայ դերասանական խումբը ներկայացնելու է Սոֆոկլի յայտնի «Էդիպ արքան»։

◆ Այսօր Աբքունական թատրոնում ցեղեկով կը տրվի «Սէվիլեան սափրիչ» կոմիքական օպերան, իսկ երեկոյեան՝ «Կարմէն»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Ուրբաթ երեկոյեան, հոկտեմբերի 12-ին, «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան կից Գրական.-Գեղագիտական Սալօնում տեղի ունեցաւ Սալօնի VII տարեշրջան-սէզօնի բացումը։

Հրաւիրված էին ինտելիգենտ դասակարգին պատկանող բազմաթիւ անձեր երկու սեռից։

Ներկայ սէզօնի անդրանիկ երեկոն նուիրված էր տառերի գիւտի և հայ տպագրութեան յօբելեանական տօնահանդիսի յիշատակին։

Հանդէսը բանալով Սալօնի հիմնադիր Տ. Նազարեան՝ առաջարկեց պատուաւոր նախագահ ընտրել ծերունի բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանին։ Բոլոր հանդիսականները ծափահարութեամբ ընդունեցին Նազարեանի առաջարկը։ Գ. Բարխուդարեան շնորհակալութիւն յայտնելով՝ համառօտ կերպով ծանօթացրեց ներկաներին համազգային յօբելեանի էական մասի հետ։

Այնուհետև նախագահի պաշտօնով ընտրվեց բժշկ. Բ. Նաւասարդեան, որը առաջարկեց հանդիսականներին՝ ըստ ցանկութեան և հերթով խօսել օրվայ տօնակատարութեան շուրջը։

Խօսեց Մ. Զմշկեան, անելով չորս կէտից բաղկացած առաջարկ, որոնցից ընդունվեց միայն երկուսը, այն է՝ ա) Թարգմանիչների և նրանցից յետոյ բոլոր մահացած գրականագէտների յիշատակը յարգել ոտքի կանգնելով և բ) հեռագրել Սալօնի կողմից էջմիածին՝ շնորհաւորելով համազգային մեծ տօնը։

Ատրպետ խօսք խնդրելով՝ պատմական համառօտ մի ակնարկ արեց հայ տառերի, սեպագիր արձանագրութիւնների, ճարտարապետութեան ու կուլտուրայի վերաբերեալ, սկսած Քրիստոսից 5—8 դար առաջ մինչև մեր օրերը։

Այնուհետև խօսեցին ըստ աւուր պատշաճի Յ. Սոլովեան, տիկին Էմիլ (անգլիերէն), բժշկ. Ա. Բարայեան, Խուցեան քահանայ և այլք։

Տիկին Էմիլէն անգլիերէն արտասանեց հետեւեալը.

«Եւրոպական կօլոնիայի անունից թոյլ տուէք այս փայլուն և ջերմ հանդիսում արտայայտել սրտագին զգացումներ և հիացմունք։ Փառք և պատիւ բազմատանջ հայ մեծ ազգին, որ Ասիայում, վայրենի ցեղերի մէջ տարածուն է քաղաքակրթութեան, գիտութեան և արուեստի։ Ողջոյն՝ Կովկասում գտնվող եւրոպական ձեզ շնորհակալ կօլոնիայից, որը այս սիրուն և ջերմ անկիւնում մոռանում է, որ գտնվում է ամենքան ամնքան հեռու իր սիրելի հայրենիքից։ Կեցցէ Գրական-Գեղագիտական Սալօնը»։

Հանդիսականների խնդրանքը ինքը ճառախօս տիկինը սիրալիր թարգմանեց այս իր ողջոյնը ֆրանսերէն, որը հայերէն թարգմանեց նախագահ բժշկ. Նաւասարդեանը։

Բարօնեսսա Մէդէմ շատ զգացված արտասանեց երկու ռուսերէն ոտանաւոր՝ արժանանալով երկարատև ծափահարութիւնների։

Կարդացվեցին նաև համազգային տօնին վերաբերեալ շնորհաւորական հեռագիրներ ու նամակներ՝ ստացված Սալօնի և Տ. Նազարեանի անունով։

Բանախօսութիւններից յետոյ տեղի ունեցաւ երաժշտական բաժին, ղեկավարութեամբ Սալօնի գեղարուեստական մասին նախանձախնդիր իտալացի պրոֆեսսոր Բրոջիի։ Նուագվեցին և երգվեցին զանազան ախորժալուր յօբելինուածքներ։

Երաժշտութիւնից յետոյ բժշկ. Նաւասարդեան մի քանի խօսքով նորից անդրադարձաւ համազգային յօբելեանի շուրջը՝ և ի վերջոյ առաջարկեց սրտանց շնորհակալութիւն յայտնել Սալօնի հիմնադիր բազմաշատ Տ. Նազարեանին, որի ձեռներէցութեամբ Սալօնի յաճախորդները ստանում են մտաւոր, հոգեկան և գեղարուեստական բաւականութիւն։ Ներկաները բուռն ծափահարութեամբ յայտնեցին Տ. Նազարեանին իրանց շնորհակալութիւնը և երեկոյեան ժամը 11-ին գոհ սրտով մեկնեցին։

Մոռացայ ասել, որ հանդիսականները, ըստ սովորութեան, հիւրասիրվում էին պ. Նազարեանի կողմից թէյով և քաղցրաւենիքով։

Х.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետական Դումայի անդամների ընտրութեան վերաբերեալ հրատարակված Բարձրագոյն ուկազի հիման վրա՝ Կովկասում ընտրութիւնները նշանակված են ներկայ հոկտեմբերի 20-ին։

◆ Զինուորական մինիստր Սուխոմլինովը մեկնում է Սպալա։

◆ Սուոլիպինը «Н. Вр.»-ում ի միջի այլոց գրում է, որ զինուորական մինիստր Սուխոմլինովը մինիստրների խորհրդի նիստում յայտնել է. «Մենք պատրաստ ենք պատերազմի, եթէ նա անհրաժեշտ լինի»։

◆ Բ. Դուռը հրահանգեց իր բոլոր ներկայացուցիչներին յայտնել մեծ պետութիւնների կառավարութիւններին, որ Թիւրքիան ոչ մի կերպ թոյլ չի տայ միջամտել այժմ, երբ նա հաշիւ է տեսնում բալկանեան պետութիւնների հետ։

◆ Բոսֆորը շատ ուժեղ կերպով ամրացնում են Թիւրքերը։

◆ Վիէննայի մամուլը գրում է, թէ Ռուսաստանի և Անգլիայի յարաբերութիւնները սառել են բալկանեան հարցի առիթով։ Անգլիայի համակրութիւնը Թիւրքերի կողմն է։

◆ Զերնոգօրիան բանակցութիւններ է վարում Միլանի դրամատէրերի հետ Իտալիայի երաշխաւորութեամբ 20 միլիոն ֆրանկի փոխառութիւն կնքելու մասին։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ հերքում են այն լուրը, թէ իբր Ֆրանսիան պայմանագրով պարտաւոր չէ օգնել Ռուսաստանին Աւստրիայի հետ պատերազմելու դէպքում։ Ֆրանսիան և Անգլիան պարտաւոր են պայմանագրով օգնել Ռուսաստանին բալկանեան բարդութիւնների մէջ։

◆ Զերնոգորցիք պայման կապեցին միրիդիտների ցեղի հետ, որ տալու է 10,000 կուլոյ զինուոր։

◆ Ֆրանսիական ծովային մինիստրը հրամայեց մի խումբ ռազմանաւերի պատրաստ լինել պաշտպանելու ֆրանսիահպատակների շահերը Միջերկրական ծովի արևելեան նաւահանգիստներում։

◆ Պետերբուրգի սլաւոնական ընկերութիւնը մերժեց կին-բժիշկներին երթալ պատերազմի դաշտը, դանելով որ Թիւրքերի հետ սկված պատերազմում կնոջ պատիւը գտնվում է վտանգի մէջ։

◆ Բելգիայի լրագիրները հեղեղվում են Թիւրքերի տարած յաղթութիւններով։ Ադրիանուպոլսի մօտերը բոլգարները տուել են իր 7000 սպանված և վիրաւոր։ Սակայն այս ամենը սոսկ լուրեր են։

◆ Լուր է տարածված, թէ իբր սերբերի կողմը անցած յայտնի Իսսա Բօլէտինացը փորձեց կրկին միանալ Թիւրքերին, բայց սերբերը նրան սպանել են։

◆ Զմիւռնիայի մօտ զինուորական գնացքի խորտակման ժամանակ վիրաւորվեցին 400 մարդ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզաքարական, վենէրական և կաստի հիւանդութիւնների։ Էլեքտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցերեկ.
Սօլօլակ, Բէլուսովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆոն № 1175.
(օ. մ.) 377. 100—26

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են ՕՐՄԱՆԵԱՆ սրբազանի հետեւեալ աշխատութիւնները.
«Համապատում» շքեղ կազմով 3 ր.
«Հայոց եկեղեցին» 1 ր.
«Ապգապատում» բաժան. իւրաքանչիւր պրակը 50 կ.
Միենոյն գրատանը ստացվել են նոր գրքեր վաճառելու համար.
Շահ-Պարոն, «Արցունքի ծով», դրամա 4 գործ. 25 կ.
Իլիա Ճավճավաձէ, «Մուրացկանի պատմածը». 15 կ.
Ահարոնեան, «Աստծու կրակը». 15 կ.
Զարուհի, «Կամքի ոյժը. Նապոլէոն Բոնապարտ». 20 կ.
Գաբրիէլ դ'Անունցիո, «Զիսկոնդա», ողբ. 5 արար. 15 կ.
Միենոյն գրատանը վաճառվում են հրապարակում նոր լոյս տեսած թէ հայերէն և թէ ռուսերէն գրասգրքերը։
Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная Торговля. 768. 1—1

Золотая медаль Лондонъ 1893 г.
Главный складъ У. Г. Ф. Юргенсъ, Москва.
(М. 5874) 24—18

Եղբ. Աւսարգիսովների
այլին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկում են Զրի։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(Ե.Հ.Կ.) 739. 10—5

ՀՕՆՕՐՐԵԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ ՆՈՐ-ՄՈԴԱՈ
„SALO—ՊԻՋԻԼԻՆ"
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միանամանակ լաւ է նեղարձում թէ սուր և թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայատուկ բնգաց։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութիւնի Գեղային Ապրանքների վաճառանոցում։
(կ.) (П. 23620) 52—39

ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆՈՎ
ԾԱԽՎՈՒՄ Է
ՄԻ ՓՈՔՐ ՏՈՒՆ
130 սաժէն գետնով, Կախէտինսկայա փողոցը, № 50. ունի նաև բանկի պարտք։ Պայմանների մասին հարցնել՝ Բազիէվայա փողոց, տ. № 4.
(Չ.ու.կ.) 766. 5—1

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.
1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամատիւրգ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ, Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ, Աւետիք Առաքելեանի (յօգուտ «Մշակի» ֆոնդի) . . 50 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ գրաւ։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.
(1) 10—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
ստացվել է արդէն Օրմանեան սրբազանի «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ» աշխատութեան Առաջին պրակը։ Խնդրվում է Թիֆլիսի բաժանորդներին անձամբ ստանալ Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցից։ Իսկ օտարաքաղաքացի բաժանորդներին արդէն ուղարկված է։
Բաժանորդագրութիւնը շարունակվում է։
Դիմել՝ Тифлисъ, Центральная Книжная Торговля. С. П. Теръ-Израеліанцъ.
(Կ.) 757. 2—2

Ներկայ հոկտեմբեր ամսի 1-ից Պուշկինսկայա փողոցում № 29 Դոլուխանեանի շինութեան մէջ, քաղաքի կենտրոնում,
ԲԱՑԵԼ ԵՄ ԵՒՐՈՊԱ ՀԻՒՐԱՆՈՑ,
բաղկացած բոլորովին մաքուր՝ նոր կահկարասիքով կահաւորված համարներից։ Էլեքտրական լուսաւորութիւն, վաննա, դուշ։ Գները չափազանց մատչելի են։
Խորին յարգանքով՝ Կ. Խաչիկեանց
(Հ. Կ.) 748. 10—3

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնոմարեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տէլէֆոն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կամարայի, ըիֆլէնոյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սրդրանեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿԱՄԻՆՏՐ մարբէյլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփական գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(Չ.ու.կ) 617. 50—3

ԱՅՍ ՕՐԵՐՍ ՎԱՃԱՌՔԻ ԵՆ ՀԱՆՎԱԾ
ԳՐԱՄՄՕՖՕՆԱՅԻՆ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ
ՎԵՐՋԻՆ ԳՐՈՒԹԵԱՆ
Բազմաթիւ նորոյթներ հայոց, վրաց, թուրքաց եւ ռուսաց լեզուներով,
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՐՁԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ։

ОБЩЕСТВО ГРАММОФОНЪ СЪ ОГР. ОТВ.

ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ԶՐԻ ՏՐՎՈՂ
ՊՐՕՍՊԵԿՏՆԵՐԸ
Թիֆլիս, Գօլովինսկի պր. № 9, ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԴԷՊ
704. 10—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный